Digitally signed by GASPARYAN LUSINE 7809730103
Date: 2022.09.23 11:59:39 AMST

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Թեմատիկ պլանավորում

5-րդ դասարան

34 ժամ

Հ/հ	Բ/հ	Դասագրքի թեմաները /Լրացվում է մատյանում/	Ինտեգրվող բաղադրիչները /Մատյանում չի լրացվում/	Հիմնական թեմայի և ինտեգրվող բաղադրիչի ձուլման հատվածի առաջարկություն
ՆԵՐԱԾԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ /1 ժամ/				
1	1	Ներածություն	1. Ձեռնարկատիրական գործունեության գաղափարի ձևակերպումը	Աշխատանքի և նրա նշանակության մասին զրույցից հետո, սովորողների ներկայացնել, որ առարկան ուսումնասիրելու ընթացքում բազում գաղափարներ ենք իրագործելու՝ պատրաստելու ենք հետաքրքիր առարկաներ, իրեր և այլն: Օրինակ, փայտամշակման թեման ուսումնասիրելուց փայտից ենք ինչ որ իր պատրաստելու, մետաղամշակման ժամանակ՝ մետաղալարից և այլն: Սովորողներին հարցնել թե ինչ գաղափարներ կառաջարկեն, ինչեր պատրաստենք հետագայում այդ թեմաներն ուսումնասիրելուց: Դրանք գրել գրատախտակին: Հետո բացատրել, որ իրենց այդ գեղեցիկ ու հետաքրքիր մտքերը, մտահաղացումները, գաղափարները կարող են դառնալ ձեռնարկատիրական գաղափարներ: Նրանց բացատրել ինչ է ձեռնարկատիրական գաղափարը, որից հետո իրենց գաղափարների կողքին գրել թե որ դեպքում են դրանք դառնում ձեռնարկատիրական գաղափարներ և շարունակել ինտեգրումն օգտվելով ուսուցչի ձեռնարկի 7-11-րդ էջերից
ԳՐԱՖԻԿԱ /6 ժամ/				
2	1	Գծագրական գործիքներ, նյութեր և պիտույքներ		
3	2	Աշխատատեղի կազմակերպումը, գծագրական գործիքներով աշխատելու ձևերը		

4	3	Հասկացություն ստանդարտների մասին, գծագրի ձևաչափերը և հիմնական մակագրությունները		
5	4	Գծերի տեսակները, ստանդարտ գրատեսակներ		
6	5	Չափադրում		
7	6	Երկրաչափական կառուցումներ		
ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ /6 ժամ/				
8	1	Ուսունաարտադրական գործընթացի կազմակերպումը		
9	2	Ծինվածքների պատրաստման տեխնոլոգիական գործընթացը		
10	3	Փայտանյութի մշակումը կտրմամբ		
11	4	Փայտանյութի շաղափումը ձեռքի գործիքներով		
12	5	Դետալների վերջնամշակում և հավաքում	2. Ձեռնարկատիրական գործունեության իրականացում	Դասի ընթացքում, մեխերի, կամ պտուտակների օգնությամբ փայտյա դետալները միացնելով ինչ որ իր ենք պատրաստելու, օրինակ՝ կավճաման: Պատրաստման ընթացքում, կամ ավարտելուց հետո հենց կարելի է անցնել ինտեգրման՝ սովորողներին ներկայացնելով, որ իրենք ինչ որ չափով զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությաբ, որ իրենք կազմակերպել և իրականացրել են կավճաման պատրաստելու ձեռնարկատիրական գաղափարը և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելով պատրաստել կավճաման: Հետո շարունակել ինտեգրումն օգտվելով ուսուցչի ձեռնարկի 11-12-րդ էջերից
13	6	Ծինվածքների գեղերեսում	3. Որոնք են արտադրության գործոնները	Նախորդ դասի ընթացքում պատրաստած կավճամանը գեղերեսելուց և կավճամանի պատրաստման աշխատանքը վերհիշելուց հետո, սովորողներին ներկայացնել, որ իրենք ապրանք են ստեղծել-արտադրել և այդ ապրանքի ստեղծման-արտադրման ժամանակ անհրաժեշտ ամեն ինչ վերագրելով արտադրության գործոնների, կատարել ինտեգրում՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 13-18-րդ էջերից

ՄԵՏԱՂԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ /8 ժամ/				
14	1	Բարակ թերթամետաղ		
15	2	Բարակ թերթամետաղից և մետաղալարից դետալների գրաֆիկական պատկերում		
16	3	Չափանշում		
17	4	Բարակ թերթամետաղի կտրում և ծռում	4. Ի՞նչ է աշխատանքը: Ի՞նչ է աշխատանքային ռեսուրսը: Ի՞նչպես ընդունվել աշխատանքի:	Բարակ թերթամետաղի կտրման և ծռման աշխատանքների կատարումից հետո, մեկնաբանելով այդ աշխատանքը <<Կտրելու և ծռելու համար ֆիզիկական ուժ պահանջվեց՝ մկրատը գործադրելու, թերթամետաղը ծռելու համար: Բացի այդ մտավոր ջանքեր պահանջվեցին, մկրատը ճիշտ բռնելու, թերթամետաղից ճիշտ նախապատրաստվածք կտրելու, ճիշտ ծռելու համար>>, տալ աշխատանքի նկարագրությունը, բացատրել ի՞նչ է աշխատանքը, աշխատանքային ռեսուրսը և քննարկել ի՞նչպես կարելի է ընդունվել որպես թերթամետաղ մշակող բանվոր՝ մետաղամշակման ձեռնարկատիրությունում գործատուի մոտ՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 19-23-րդ էջերից
18	5	Գայլիկոնում	5. Ի՞նչպես կազմել և տարածել աշխատանքի մասին հայտարարություն աշխատանքի ընդունվելու նպատակով: Ի՞նչ է աշխատանքի նկարագրությունը:	Գայլիկոնման աշխատանքը նկարագրելուց և գայլիկոնման հաստոցին ծանոթացնելուց հետո, սովորողներին առաջարկել իրենց պատկերացնել որպես մետաղամշակման ձեռնարկատիրության տնօրեն, գործատու և փորձել գայլիկոնող բանվորի թափուր աշխատատեղի համար հայտարարություն մշակել՝ նկարագրելով այդ աշխատանքը: Մինչ հայտարարությունը մշակելը նրանց ներկայացնել ինչ է աշխատանքի մասին հայտարարությունը և աշխատանքի նկարագրությունը՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 23-25-րդ էջերից
19	6	Դետալների միացումը գամերով: Վերջնամշակում		
20	7	Աշխատանք մետաղալարով	6. Ի՞նչ է աշխատանքային հարցազրույցը և ինչպես կազմակերպել այն:	Դասը ներկայացնելուց հետո, սովորողների մի մասին նշանակել որպես մետաղամշակման ձեռնարկատիրության տնօրեն- գործատուներ, իսկ մյուս մասին որպես աշխատանքի ընդունվողներ:

				Հանձնարարել կազմե մետաղալարով աշխատող բանվորի աշխատատեղի հայտարարություն օգտվելով այդ օրվա կատարած գործնական աշխատանքից և կազմակերպել աշխատանքի ընդունման հարցազրույց ու ընդունելություն: Կատարել ինտեգրում օգտվելով ուսուցչի ձեռնարկի 26-30-րդ էջերից
21	8	Դետալների միացումը ծալակցումով: Զոդում	7. Ի՞նչ է կապտալը և ինչ է կապիտալ ռեսուրսը: Կապիտալ ռեսուրսները մշտապես նորացվում են և մարդիկ անընդհատ ստեղծում են նոր կապիտալ ռեսուրսներ:	Դետալների ծալակցումը և զոդման աշխատանքները ներկայացնելուց հետո, այդ աշխատանքների կատարման ընթացքում /ծալակցումով ինչ որ իր պատրաստելուց/ սովորողներին ներկայացնել, որ իրենք ապրանք են ստեղծում-արտադրում և այդ ապրանքի ստեղծման-արտադրման ժամանակ անհրաժեշտ ամեն ինչ վերագրել արտադրության գործոնների: Որից հետո արդեն առանձնացնել աշխատանքային ռեսուրսը: Հետո մնացած ռեսուրսներից առանձնացնելով կապիտալ ռեսուրսները ներկայացնել ի՞նչ է կապիտալը և կապիտալ ռեսուրսը: Կատարել ինտեգրում՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 31-36-րդ էջերից
ՆՅՈՒԹԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ /6 ժամ/				
22	1	Գեղարվեստական արհեստները Հայաստանում	8. Ի՞նչ է բնական ռեսուրսը: Բնական ռեսուրսներն անսպառ չեն և պետք է դրանք օգտագործել խնայողաբար	Գեղարվեստական արհեստների մասին խոսելուց և այդ արհեստների արդյունքում ունեցած արտադրանքների օրինակներից մեկը վերցնելով /օրինակ՝ փայտի գեղարվեստական փորագրում, փորագրմամբ գրքի կազմեր, նարդի և այլն ստեղծելով/ բերել նրան, որ արհեստով զբաղվողները նույնպես ապրանք են ստեղծում-արտադրում, կամ ծառայություններ մատուցում և այդ ապրանքի ստեղծման-արտադրման, կամ ծառայության մատուցման ժամանակ անհրաժեշտ ամեն ինչ վերագրել արտադրության գործոնների: Որից հետո արդեն առանձնացնել աշխատանքային և կապիտալ ռեսուրսը: Հետո մնացած ռեսուրսները դասելով բնական ռեսուրսների շարքին ներկայացնել ի՞նչ է բնական ռեսուրսը: Կատարել ինտեգրում՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 37-44-րդ

				էջերից
23	2	Արտադրանքի գործառնական և գեղագիտական արժեք	9. Ձեռնարկատերը որպես արտադրության գործոն:	Արտադրանքի գործառնական և գեղագիտական արժեքները ներկայացնելուց հետո, քննարկելով կավից պատրաստված նախշազարդ ծաղկամանի գործառնական և գեղագիտական արժեքները սովորողներին առաջարկել իրենց պատկերացնել որպես կավի ծաղկամանի արտադրության ձեռնարկատիրության տնօրեն, որպես ձեռնարկատեր: Մեկնաբանել, որ ձեռնարկատերը արտադրության չորրորդ գործոն է և միասին քննարկել որպես կավի ծաղկամանի արտադրության ձեռնարկատեր ի՞նչ աշխատանքային, կապիտալ և բնական ռեսուրսներ անհրաժեշտ կլինեն կավի ծաղկամանի արտադրության կազմակերպման համար՝ չմոռանալով վերհիշեցնել ձեռնարկատիրոջ կարողությունների և հմտությունների մասին կատարել ինտեգրում՝ օգտվելով ուսուցչի ձեռնարկի 45-48-րդ էջերից
24	3	Դեկորատիվ կիրառական արվեստ		
25	4	Դեկորատիվ ներկում և երանգավորում		
26	5	Նկարազարդում նախշակաղապարով		
27	6	Խարափորագրում		
ՄԵՔԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐ /4 ժամ/				
28	1	Հասկացություն մեքենաների մասին		
29	2	Հասկացություն մեխանիզմների մասին		
30	3	Հասկացություն դետալի մասին		
31	4	Գայլիկոնման հաստոցի կառուցվածքը		
ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ /3 ժամ/				
32	1	Էլեկտրատեխնիկական աշխատանքներ		
33	2	Էլեկտրական շղթա		
34	3	Պարզագույն էլեկտրական շղթայի հավաքում		